ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 02 >> հուլիս 2020թ. ՆՄՈ/ 219 2020

Քաղաք Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հունիսի 22-ի ՆՄՈ/203-2020 որոշումը և Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2020 թվականի հունիսի 29-ի թիվ ՎԴ/10359/05/19 վարչական գործով կայացված որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ. Հովհաննիսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

02.07.2020

VERIFIED OCSP 02.07.2020 14:57:03 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2020 թվականի հուլիսի 2 -ի
ՄՄՈ/ 219-2020 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության համայնքային ծառայության հարցերի բաժի պետ, նույն վարչության պետի լիազորությունները կատարող՝ *Գոռ Հովհաննիսյան*

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ *Անտոնինա Վասիլյան*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ՝ *Արմեն Դարբինյան*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ-շինարարի պաշտոնակատար՝ *Գասպար Հովհաննիսյան*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար՝ *Արաքսյա Սարգսյան*

Հանձնող՝
Եղեգնուտ համայնքի ղեկավարի նախկին պաշտոնակատար՝ Ռազմիկ Մկրտչյան

Ընդունող՝
Եղեգնուտ համայնքի ղեկավար՝ Ռազմիկ Մարգարյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

02.07.2020

VERIFIED OCSP 02.07.2020 14:47:33 GMT+4
Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 08 >> հոկտեմբեր 2020թ. ՆՄՈ/ 244 2020

Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ՄՈ/219-2020 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի հուլիսի 2-ի <<Աշխատանքային խումբ ստեղծելու մասին>> ՆՄՈ/219-2020 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման 3-րդ կետում <<5 աշխատանքային օրյա ժամկետում>> բառերը փոխարինել <<10 աշխատանքային օրյա ժամկետում>> բառերով.
   2) որոշման հավելվածում <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար՝ Արաքսյա Սարգսյան>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբաբանի պաշտոնակատար՝ Լիաննա Հարությունյան>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

08.07.2020

X

VERIFIED OCSP 08.07.2020 14:44:13 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230